# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Ա/Ձ Արման Հովհաննիսյան-ն ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/28-Ք ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | YUNNAN | YUNNAN | C-108 | Yunnan Metal Products Co., Ltd | 1.5 մմ հաստությամբ նույնականացման համարակալված մեխանիկական միջոց 1. Մաքսային ապահովման մեխանիկական միջոցը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 11-ի «Մաքսային ապահովման միջոցների պատրաստման նկատմամբ պահանջները և դրանց կիրառման կարգը սահմանելու մասին» N 107-Ն որոշման պահանջներին, ստանդարտացման, չափագիտության և |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | սերտիֆիկացման միջպետական խորհրդի 2004 թվականի դեկտեմբերի 8-ին ընդունած ГОСТ 31281-2004 ստանդարտով ներկայացված տեխնիկական պահանջներին: 2. Մաքսային ապահովման մեխանիկական միջոցը ապահովում է մարդկանց անվտանգ աշխատանքը, հրդեհաանվտանգ է և պայթյունաանվտանգ: 3. Մաքսային ապահովման մեխանիկական միջոցի կառուցվածքը բացառում է դրա և դրա բաղադրամասերի, ըստ նշանակության, կրկնակի օգտագործումը: 4. Անհնարին է մաքսային ապահովման մեխանիկական միջոցների առանց տեսանելի հետքերի հեռացումը: 5. Մաքսային ապահովման մեխանիկական միջոցի իրանը մետաղական է և պատված է պլաստմասսայով: Մաքսային ապահովման մեխանիկական միջոցը ունի բարձր ամրության պողպատյա բազմալար ճկուն լար՝ 300մմ երկարությամբ: Լարի մի ծայրը ամուր ֆիքսված լինի մաքսային ապահովման |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | մեխանիկական միջոցի իրանում, իսկ մյուս ծայրը կապարակնքման գործողության փուլի վերջում, մտցնելով իրանի ազատ անցքի մեջ, ֆիքսվում է նրանում առկա ամուր մեխանիզմ փականով բացառելով լարի հետադարձ շարժումը: 6. Մաքսային ապահովման մեխանիկական միջոցի լարի ազատ ծայրի իրանի անցքի մեջ մտցնելու գործադրման ուժը ոչ ավել քան 3կգու (30Ն), հնարավորություն ունի նաև ստուգելու փականի կողմից լարի ֆիքսման փաստը` ձեռքով, առանց լրացուցիչ գործիքների, լարի հետադարձ շարժման հնարավորության փորձարկմամբ: 7. Մաքսային ապահովման մեխանիկական միջոցը ունի պողպատյա լարը ֆիքսող առնվազն երկու փական մեխանիզմ: 8. Մաքսային ապահովման մեխանիկական միջոցի կառուցվածքով լարի երկրորդ ֆիքսումից հետո նախատեսված է երրորդ (լրացուցիչ փական) պտուտակով ֆիքսման տարբերակ, ապա լարը ֆիքսելուց հետո այն հեշտությամբ կոտրվում է և |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հեռացվում: Վերջինիս կոտրման ուժը ոչ ավել քան 5կգու (50Ն): 9. Մաքսային ապահովման մեխանիկական միջոցը տեղադրվում է ձեռքով, իսկ հեռացվում է հատուկ գործիքի օգնությամբ: 10. Մաքսային ապահովման մեխանիկական միջոցի չափսերը չեն գերազանցեն 30մմx30մմx10մմ, քաշը 50 գրամից ոչ ավել է : Մաքսային ապահովման մեխանիկական միջոցի քաշի շեղումը չի գերազանցի 5 տոկոսի սահմանները: 11. Մաքսային ապահովման մեխանիկական միջոցը ունի ամենաբարձր կայունությունը չարտոնված բացման, մանիպուլյացիաների, հատուկ միջոցներով ներգործության դեմ, որոնց չափանիշը կազմում է 60-100 նորմա-րոպե: 12. Մաքսային ապահովման մեխանիկական միջոցի իրանի, փականի կոտրման, լարի պոկման ուժը (ամրության շեմը) պակաս չէ 200կգու-ից (2000Ն), ընդ որում մաքսային ապահովման մեխանիկական միջոցի փակ պողպատե բազմալար տարրով ձևավորված օղակի առավելագույն չափի ընդհանուր |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ЧП "Арман Оганесян" в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/28-Ք ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | աճը, երբ ենթարկվում է առավելագույն թույլատրելի ձգվող ուժին, չի գերազանցում 20 մմ-ը: 13. Մաքսային ապահովման մեխանիկական միջոցը ունի մեծ կայունություն կոռոզիայի դեմ: 14. Մաքսային ապահովման մեխանիկական միջոցը դիմակայում է օդի ջերմաստիճանի -650C-ից մինչև +550C շահագործման պայմաններին, մինչև 100 տոկոս օդի հարաբերական խոնավության պայմաններում: Դիմակայում է աղի (ծովային) մառախուղի և ծովի ջրի ազդեցությանը (կարող են օգտագործվել ծովային կլիմայական պայմաններում բաց մթնոլորտում մինչև մինչև -40ºC ջերմաստիճանում), ինչպես նաև եղյամին (կարող են օգտագործվել չափավոր ցուրտ կլիմայական պայմաններում՝ դրսում մինչև -60°C ջերմաստիճանում): 15. Մաքսային ապահովման մեխանիկական միջոցը պահպահովում է աշխատունակությունը առնվազն 5 տարի: 16. Մաքսային ապահովման մեխանիկական միջոցի գույնը կապույտ է, որպեսզի մաքսային |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ապահովման մեխանիկական միջոցը հստակ առանձնանա կողպվող տարածքի ֆոնի վրա` չմթագնելով մաքսային ապահովման մեխանիկական միջոցի վրայի նշագրումները: 17. Մաքսային ապահովման մեխանիկական միջոցի մակնշումը կայուն է փոխարինման կամ կեղծման փորձերի նկատմամբ: Մաքսային ապահովման մեխանիկական միջոցի մակնշումը իրականացվում է այնպես, որ ապահովվի դրա վրա չարտոնված ազդեցության հետքերի, դրա կեղծման հետքերի հայտնաբերումը և պահպանումը մաքսային ապահովման մեխանիկական միջոցի կիրառման ընթացքում, ներառյալ իրանի, որի վրա իրականացված են մակնշումները, պաշտպանիչ շերտի մասնակի վնասվածքների դեպքում: Մակնշման ցանկացած փոփոխություն ուղեկցվում է դրանց ակնհայտ ֆիզիկական, քիմիական, ջերմային կամ այլ վնասներով կամ ոչնչացմամբ: 18. Մաքսային ապահովման մեխանիկական միջոցի մակնշումը է պարունակում է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | արտադրողի ապրանքանիշը, նույնականացման մեխանիկական միջոցի տիպը, արտադրության ժամանակը, պատվիրատուի ապրանքանիշը (ARMENIAN CUSTOMS SERVICE) և տառաթվային 8 նիշանոց համարակալում՝ երկու տառ (RA) ու 6 թիվ (250 001 - 500 000): 19. Մաքսային ապահովման մեխանիկական միջոցի վրայի գրառումը հստակ է ճանաչելի (ընթեռնելի) բնական կամ արհեստական (50лк) լույսի դեպքում 1 մ հեռավորությունից: 20. Փաթեթավորումը՝ 500 հատ մաքսային ապահովման մեխանիկական միջոց արկղում: Այլ պայմաններ • ՀՀ պետական եկամուտների կարիքների համար նոր տիպի մաքսային ապահովման համարակալված մեխանիկական միջոցների ձեռք բերումը պայմանավորված է ՀՀ կառավարության «Մաքսային ապահովման միջոցների պատրաստման նկատմամբ պահանջները և դրանց կիրառման կարգը սահմանելու մասին» 2016թ-ի փետրվարի 11-ի թիվ 107 որոշմամբ, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ГОСТ 31281 -2004 միջպետական ստանդարտի պահանջներով և ՀՀ ՊԵԿ նախագահի 2019թ-ի դեկտեմբերի 30-ի «Մաքսային ապահովման համարակալված մեխանիկական միջոցների տեխնիկական պայմանները հաստատելու մասին» թիվ 922-Լ և 2021թ-ի հունիսի 4-ի թիվ 543-Լ հրամաններով, ինչպես նաև 2019թ-ի մայիսի 27-ի «Մաքսային ապահովման համարակալված միջոցների շրջանառության, հաշվառման և հաշվառումից հանելու կարգը հաստատելու մասին» թիվ 350-Լ հրամանով: • Ապրանքների տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Մատակարարը: • Մատակարարը պետք է ներկայացնի համապատասխան հավաստագիր պահանջվող տեխնիկական բնութագրերին ապրանքի համապատասխանության վերաբերյալ: • Ապրանքները պետք է լինեն չօգտագործված: • Հրավերով մասնակցից պահանջել առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | մակնիշը, արտադրողի անվանումը և տեխնիկական բնութագիրը: • Մատակարարվող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 5 տարի ժամկետը: • Գնման գործընթացը կազմակերպել ‘‘Գնումների մասին’’ ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա: |